ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Լերմոնտովո համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 03-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N05/՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին

զեկ. Ռ.Խեչումյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ. Ա. Ռ.Խեչումյան

3. Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի առաջին եռամսյակի կատարման մասին

զեկ.Մ Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը: Նա ներկայացրեց հողամասը, որը վարձակալությամբ պետք է տրամադրվի 25 տարի ժամկետով: Սահմանվեց մեկնարկային գինը, մասնակցության վճարը: Համայնքի ղեկավարին առաջարկվեց ապահովել համապատասխան գործընթացը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N06/

2. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը: Նա ներկայացրեց երկու հողամաս, որոնք ենթակա են օտարման: Սահմանվեցին հողամասերի մեկնարկային գիները, մասնակցության վճարը և նախավճարի չափը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N07/

3. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի առաջին եռամսյակի կատարման մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց, որ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը: համառոտ ներկայացվեցին կատարված աշխատանքները: Պատասխանեց ավագանու անդամներին հուզող հարցերին: Դրանից հետո նիստը վարողն առաջարկեց քվեարկել:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N08/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ